

**«ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ Վերստուգող հանձնաժողովի
Եզրակացություն**

**«ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ տնօրենների Խորհրդին
Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

Մենք վերստուգման ենք ենթարկել «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մույն ֆինանսական հաշվետվությունների ՀՀ օրենսդրության համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական թերություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն և ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

**«ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ Վերստուգող հանձնաժողովի
պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է անցկացված վերստուգման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերստուգման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք բոլոր են տալիս ձեռք բերել վերստուգման ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ ֆինանսական վիճակը, ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերն 2010թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

«ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ
Վերստուգող հանձնաժողովի նախագահ



Հայկանուշ Հակոբյան

02.03.2011թ.